ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը, ընդհանուր՝ 274886100 (երկու հարյուր յոթանասունչորս միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով հանձնել (նվիրել) «Մեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« »____ 2023թ հ. –Ա որոշման

ՑԱՆԿ
«ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Գույքի անվանումը	նկարագրություն	արժեք ՀՀ դրամ
բեմի կոնստրուկցիաների և էլեկտրական ճախարակների համակարգ	1. Էլեկտրական շարժիչներ՝ 5 հատ, նախատեսված բեմահարթակի ետնամասում և առաջանամասում կախոցների աշխատանքի համար: Յուրաքանչյուրի բեռնվածությունը ներառած կախոցը 150կգ: 2. Էլեկտրական շարժիչներ՝ 3 հատ, նախատեսված բեմահարթակի ետնամասում և առաջանամասում կախոցների աշխատանքի համար: Յուրաքանչյուրի բեռնվածությունը ներառած կախոցը 250կգ: 3. Ալյումինե կոնստրուկցիաներ՝ 8 հատ, նախատեսված որպես կախոց աշխատելու համար: 4. Գլխավոր վարագույր՝ 1 հատ: 5. Կառավարման Վահանակ՝ 1 հատ: 6. Անհրաժեշտ ամրակային դետալներ կախոցների և վարագույրի մոնտաժման համար, ըստ մոնտաժման պահանջի՝ 1 լրակազմ: 7. Մալուխներ, ըստ մոնտաժման պահանջի՝ 1 լրակազմ:	141000000
բեմի ձայնային համակարգ	1. Բարձրախոսներ՝ 4 հատ: Հզորությունը 500-700 վատ, ձայնի աշխատանքային տիրույթը 55-18000 հերց, ձայնի ճնշումը 130-133db A տիրույթում հաշվարկած 1վատ/1մետր չափորոշիչով: 2. Բարձրախոսներ՝ 4 հատ, նախատեսված բեմի խորքային և կողային ձայն ստանալու համար: Հզորությունը 300-800 վատ, ձայնի աշխատանքային տիրույթը 65-20000 հերց, ձայնի ճնշումը 120-130db A տիրույթում հաշվարկած 1 վատ/1 մետր չափորոշիչով: 3. Բարձրախոսներ՝ 2 հատ: Հզորությունը 800-1000 վատ, ձայնի աշխատանքային տիրույթը 40-160 հերց, ձայնի ճնշումը 120-133db A տիրույթում հաշվարկած 1 վատ/1 մետր չափորոշիչով: 4. Ուժեղացուցիչներ՝ 2 հատ, Lab gruppen DL 80:4 5. Ձայնի թվային ղեկավարման վահանակ՝ 1 հատ: 6. Հեռակառավարվող խոսափողներ՝ SHURE QLX-D4՝ 4 հատ, QLX-D1՝ 2 հատ , QLXD2 beta 58 խոսափող՝ 2 հատ՝ k51 or L51 տիրույթով:	58354100

	7. Խոսափողներ՝ 6 հատ, նախատեսված ներկայացումների ընդհանուր ձայնադրման համար: 8. Խոսափողներ՝ 4 հատ, լարով նախատեսված ընդհանուր օգտագործման համար: 9. Խոսափողներ՝ 2 հատ, DPA 4488 նախատեսված գլխին դնելու համար, 10. Ազդանշանային մալուխներ CORDIAL ՝ 300 մետր: 11. Միացուցիչներ Neautrik տեսակի NC3 MXX ՝ 50 հատ: 12. Միացուցիչներ Neautrik տեսակի NC3 FXX ՝ 50 հատ: 13. Մալուխներ՝ 300 մետր: 14. Մեծ ամրակներ նախատեսված խոսափողների համար ՝ 8 հատ: 15. Դյուրակիր համակարգիչ՝ 1 հատ, 16. Ձայնագրման համար նախատեսված արտաքին սարք, Focusrite Scarlett 18i20 Sound card 8 ch՝ 1 հատ: 17. Բարձրախոսների միացման կցորդիչներ՝ 20 հատ, Speakon neutrik NL 4: 18. Կախիչներ՝ 8 հատ, նախատեսված բարձրախոսների համար:	
բեմի լուսային համակարգ	1. Լեդ Լուսատու սարք՝ 11 հատ, 300Վտ, 6 հիմնական գույն: 2. Լեդ լուսատու սարք՝ 25 հատ, 210Վտ հզորությամբ, լուսագունաջերմատվությունը 3200 կելվին: 3. Լեդ լուսատու սարք՝ 30 հատ, 12 անգամ 15Վտ հզորությամբ չորսը մեկում (RGBW) լեդ չիպերով: 4. Շարժվող լեդ լուսատու սարք՝ 5 հատ 5. Լույսերի կառավարման վահանակ՝ 1 հատ 6. Թվային ազդանշանի բաժանարար և ուժեղարար RMD՝ 6 հատ 7. Հոսանքի մալուխ 5 անգամ 4՝ 500 մետր: 8. Հոսանքի եռաֆազ մալուխ 5 անգամ 16՝ 30 մետր: 9. Հոսանքի մալուխ 3 անգամ 1.5մմ՝ 400 մետր: 10. Թվային ազդանշանի մալուխ 110 Ω AES/EBU, մակերեսը 0,22 մմ^2: Տրամագիծը 4,5 մմ՝ 600 մետր: 11. Թվային մալուխ LAN CAT7՝ 200 մետր: 12. Հոսանքի ավտոմատ անջատիչ երեք բևեռ 100Ա՝ 3 հատ: 13. Հոսանքի ավտոմատ անջատիչ մեկ բևեռ 16Ա՝ 60 հատ: 14. Ավտոմատ անջատիչների մետաղական տուփ, 25 տեղանոց, լրակազմով՝ 3 հատ: 15. Մետաղական տուփ ՝ 8 հատ: 16. Հոսանքի միակցիչ մալուխային վարդակ, մեկ տեղանի 16Ա, գույնը սև՝ 100 հատ: 17. Հոսանքի միակցիչ մալուխային խրոցակ, 16Ա, գույնը սև՝ 100 հատ: 18. Հոսանքի միակցիչ մալուխային վարդակ, երեք տեղանի 16Ա, գույնը սև՝ 50 հատ: 19. Թվային ազդանշանի միակցիչ 3 բևեռ վարդակ մալուխի միակցիչ՝ 200 հատ: 20. Թվային ազդանշանի միակցիչ 3 բևեռ խրոց մալուխի միակցիչ՝ 200 հատ: 21. Թվային ազդանշանի միակցիչ 5 բևեռ վարդակ մալուխի միակցիչ՝ 50 հատ: 22. Թվային ազդանշանի միակցիչ 5 բևեռ խրոց մալուխի միակցիչ՝ 50 հատ: 23. Հոսանքի էլ մալուխի միակցիչ՝ 300 մետր: 24. Բեմական թեթև ծխի ապարատ՝ 1 հատ, 25. Թեթև ծխի հեղուկ, անգույն, առանց հոտի և դյուրավառ, տարա 5լ:	58702000

թատերական աթոռներ	170 հատ թատերական աթոռ, 5 հատ լրացուցիչ թատերական աթոռ և պահեստային նյութեր (50մ կտոր՝ պաստառի գործվածք, 2 աթոռի պահեստամասեր):	16830000

ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԸ՝ 274886100 (երկու հարյուր յոթանասունչորս միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հարյուր) ՀՀ դրամ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա թատերահամերգային տեխնիկական միջոցները (բեմի կոնստրուկցիաների և էլեկտրական ճախարակների համակարգ, բեմի ձայնային համակարգ, բեմի լուսային համակարգ) և թատերական դահլիճի աթոռները Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Թատրոն) սեփականության իրավունքով անհատույց հանձնելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ:

2022 թվականին մեկնարկել են թատրոնի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները, որի շրջանակում կիրականացվեն նաև շենքի արտաքին ճակատի վերանորոգման աշխատանքները, կգործարկվի վերելակ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Զուգահեռաբար, Երևանի քաղաքապետարանը իրականացրել է թատրոնի վերազինման և արդիականացման ծրագիրը: Երևան քաղաքի 2023 թվականի «Թատրոնների հիմնանորոգում» ծրագրի շրջանակում թատրոնի վերազինման և տեխնիկական արդիականացման 3 բաղադրիչների (բեմի կոնստրուկցիոն, ձայնային և լուսային համակարգեր) ձեռքբերման համար հատկացվել է 258056.1 հազ. (երկու հարյուր հիսունութ միլիոն հիսունվեց հազար հարյուր) ՀՀ դրամ, իսկ թատերական աթոռների (նստատեղերի) ձեռքբերման պայմանագրային արժեքը կազմել է 16830.0 հազ. (տասնվեց միլիոն ութ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ՝ թատրոնի հիմնանորոգման և վերազինման համար Երևանի քաղաքապետարանը հատկացրել է շուրջ 400 մլն ՀՀ դրամ:

Որոշման ընդունման արդյունքում կիրականացվի թատրոնի վերազինման և տեխնիկական արդիականացման ամբողջական գործընթացը, ինչը էապես կբարելավի թատրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակը, կնպաստի թատրոնի կողմից ստեղծվող մշակութային արտադրանքի գեղարվեստական գրավչության մեծացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Մեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով գույք հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Մեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով գույք հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ